ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/47

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.06.2019թ.-ին, իսկ 27.06.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 09.07.2019թ. ու 18.07.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 18.07.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.07.2019թ.-ին:

2. <u>«Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում դեղատնային ծառայությունները:

Ընթացակարգին մասնակցության նպատակով Ընկերության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հրավերում կատարվել է փոփոխություններ, սակայն հրավերը հրապարակված է առանց փոփոխություն բառերի նշման և հրավերի փոփոխության մասին հայտարարությունը ևս հրապարակված չէ:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից իրականացված գործողությունները ոչ իրավաչափ են և չեն համապատասխանում Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

3. «<u>Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կետրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.06.2019թ. գրությամբ դիմել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կետրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կետրոն» ՓԲԸ-ն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղատնային ծառայության ձեռքբերման նպատակով 12.06.2019թ. հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարվել են փոփոխություններ:

www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգի վերաբերյալ փոփոխություն կատարելու պայմանների մասին հայտարարություն չի հրապարակվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին

մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղատնային ծառայության ձեռքբերման նպատակով 12.06.2019թ. հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30» ծածկագրով գնման ընթացակարգ:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարվել են փոփոխություններ, սակայն www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ փոփոխություն կատարելու պայմանների մասին հայտարարություն չի հրապարակվել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 12.06.2019թ. հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30» ծածկագրով գնման ընթացակարգ, որի հրավերում կատարվել են փոփոխություններ, սակայն փոփոխություն կատարելու պայմանների մասին հայտարարություն չի հրապարակվել, որի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**